



COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր Ինչ Պետք Է Իմանալ Պատանիները



ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ

Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի մեծ տարիքի, ապա կարող եք պատվաստվել **Pfizer** պատվաստանյութով:

- Պատվաստումն **անվճար** է բոլորի համար:
- Ձեզից չի պահանջվում ունենալ ապահովագրություն:
- Ձեզ չեն հարցնի ձեր ներգաղթի կարգավիճակի մասին:
- Եթե դուք 18 տարեկանից փոքր եք, պատվաստվելու համար ձեզից պահանջվելու է ծնողի կամ օրինական խնամողի համաձայնությունը:

ԻՆՉՈՒՒ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ COVID-19-Ի ԴԵՄ



- COVID-19-ի դեմ պատվաստանյութերն **անվտանգ են և արդյունավետ:**
- Շատ երիտասարդներ, որոնք վարակվում են COVID-19-ով, ունենում են մեղմ ախտանիշներ, կամ ախտանիշներ չեն ունենում, սակայն ոմանք կարող են ուժեղ հիվանդանալ կամ ունենալ երկարատև առողջական խնդիրներ:
- Եթե դուք վարակվեք COVID-19-ով, ապա կարող եք տարածել վիրուսը մյուսներին՝ անգամ, եթե ձեզ վատ չզգաք: Պատվաստվեք և այդպես օգնեք պաշտպանել ձեր ընկերներին և ընտանիքի անդամներին:

ՈՐՏԵՂ ԿԱՐՈՂ ԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԵԼ

Ձեզ մոտիկ պատվաստման վայր գտնելու համար հարցրեք ձեր բժշկից, տեղային դեղատնից կամ այցելեք՝ **VaccinateLACounty.com**: Փնտրեք պատվաստման կլինիկաներ ձեր դպրոցում կամ ձեր հարևանությամբ: Պատվաստման վայրերից շատերում **անհրաժեշտ չէ նախնական ժամադրություն:**


Չանգահարեք Հանրային Առողջապահության Վարչության (DPH) Պատվաստումների Չանգերի Կենտրոն՝ **833-540-0473** հեռախոսահամարով, եթե ձեզ անհրաժեշտ է օգնություն պատվաստանյութերի ընտրման, դեպի պատվաստման վայր փոխադրման կամ տանը պատվաստման համար դիմելու հարցերում, եթե դուք չեք կարող դուրս գալ տնից: Այն գործում է ամեն օր առավոտյան 8-ից երեկոյան 8:30:

Տեղեկությունները հասանելի են տարբեր լեզուներով՝ 24/7, 2-1-1 հեռախոսահամարով:



ՈՐՈՆՔ ԵՆ ԿՈՂՄՆԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Կողմնակի ազդեցությունները տարածված են և հանդիսանում են նշան այն բանի, որ ձեր իմունային համակարգը **ստեղծում է պաշտպանություն:**
- Կողմնակի ազդեցությունները կարող են ներառել ձեռքի ցավ կամ կարմրություն, հոգնածության զգացում, ջերմություն, դող, գլխացավ կամ մկանների ցավ: Բոլորի մոտ չեն դրսևորվում կողմնակի ազդեցությունները:
- Կողմնակի ազդեցությունները կարող են դժվարացնել ձեր առօրյա գործունեությունը, սակայն պետք է անցնեն մի քանի օրերի ընթացքում:



VaccinateLACounty.com
(Armenian)



COUNTY OF LOS ANGELES
Public Health



COVID-19-ի դեմ Պատվաստանյութեր Ինչ Պետք Է Իմանան Պատանիները

ԱՐԴՅՈ՞Ք COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐՆ ԱՆՎՏԱՆԳ ԵՆ

- Դուք չեք կարող վարակվել COVID-19-ով պատվաստանյութից: Պատվաստանյութերից ոչ մեկը չի պարունակում COVID-19 առաջացնող վիրուսը:
- Պատվաստանյութերը փորձարկվել են տասնյակ հազարավոր մարդկանց նկատմամբ, ներառյալ՝ բոլոր տարիքի, տարբեր մաշկի գույն ունեցող, ինչպես նաև առողջական խնդիրներ ունեցող անձինք և եղել են անվտանգ:
- Պահպանվել են բոլոր անհրաժեշտ քայլերը՝ հավաստիանալու, որ պատվաստանյութը **անվտանգ է և արդյունավետ**:
- Չկա որևէ ապացույց այն մասին, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ազդում են պատանիների զարգացման կամ երեխա ունենալու ձևեր կարողության վրա: Պատվաստումը նվազեցնելու է ձեր հիվանդանալու վտանգները, ձեր կողմից մյուսներին վիրուսի տարածումը, հոսպիտալացումը կամ COVID-19-ի արդյունքում մահանալը:



ՆԱԽՔԱՆ ՊԱՏՎԱՍՏԿԵԼԸ

- Չրուցեք ձեր ծնողի հետ COVID-19-ի դեմ պատվաստման մասին: Տվեք նրան ձեզ հուզող բոլոր հարցերը:
- Հավաստիացեք, որ պատվաստման կլինիկան, որը դուք այցելելու եք, տրամադրում է Pfizer պատվաստանյութ:
- Ձեզ հետ վերցրեք ձեր ծնության ամսաթիվը պարունակող փաստաթուղթ այն դեպքում, եթե ձեզնից կպահանջեն ներկայացնել տարիքի ապացույց:
- Մի՛ մոռացեք **ծնողի համաձայնության** մասին: Ձեր ծնողը կամ օրինական խնամողը պետք է լրացնի համաձայնության ձևը:
- Պատվաստվեք այլ պատվաստանյութերով ևս: COVID-19-ի դեմ պատվաստումը կարելի է կատարել այլ պատվաստումների հետ միաժամանակ, դրանցից առաջ, կամ հետո, ինչպես օրինակ Մարդու Պապիլոմավիրուսի (ՄՊՎ) դեմ պատվաստումը:

ԱՄԲՈՂՉՈՎԻՆ ՊԱՏՎԱՍՏԿԵԼՈՒՑ ՀԵՏՈՒ

- Դուք **ամբողջովին պատվաստված եք** Pfizer պատվաստանյութի 2-րդ դեղաչափը ստանալուց 2 շաբաթ անց: Ձեր մարմնից պահանջվում է ժամանակ իմունիտետ ստեղծելու համար:
- Ամբողջովին պատվաստվելուց հետո դուք՝
 - Կարող եք վերսկսել այնպիսի գործողությունները, որոնք նախկինում չէիք կարող կատարել, ինչպես օրինակ՝ ընկերների հետ ժամանակ անցկացնելը, սպորտային խաղեր խաղալը (առանց թեստ հանձնելու), կամ ընտանիքի անդամներին այցելելը:
 - Ձեզնից չի պահանջվում պահպանել կարանտին, եթե ձեր ընկերը, ընտանիքի անդամը, ուսուցիչը կամ թիմակիցը վարակվում է COVID-19-ով:

